

չարալլուկ տանջանաւք. եւ հրամայէր սպանանել անդէն եւ անհետ առնել զմարմին սրբոյն, յաղագս չգտանելոյ ուրուք ի քրիստոնէից, ի պատիւ տանելոյ զոսկերս Նորա: 2 Եւ հասեալ դեսպանին անդ՝ կատարեալ մոգուցն զհրամանն եւ լցեալ խնդութեամբ. բայց յառաջ քան զվախճան սրբոյն՝ քերեցին Նախ տանջանաւք զաւուրս բազումս զմարմինն սրբոյն յոսկերացն, եւ ապա ըստ հրամանի թագաւորին հատեալ սուսերաւ զգլուխն եւ սպանին:

Ծ. Նոյնպէս տայր հրաման եւ վասն¹ այլ քահանայիցն սրբոց, զորս թողին կապեալս ի Նիւշապուհ ի դղեկին: 2 Տայր հրաման Վեհդենշապիոյ² ամբարապետի³ առնուլ ընդ իւր երկուս եւս այլ աւգնականս յաւագանւոյն, զԶնիկան մայպետն արքունի, եւ զՄովան անդերծապետ՝ ի ձեռանէ մովպետան⁴ մովպետի, երթալ փութով յառաջ քան զինքն, եւ հանել զսուրբ քահանայսն ի բանտէն, ուր էին կապեալք Նոքա եւ Նախարարքն Հայոց, եւ տանել զնոսա հեռի ի քաղաքէն յանկոխ եւ յանապատ տեղի, եւ անդ չարալլուկ տանջանաւք, որպէս եւ կամեսցի, բարձցէ զնոսա ի կենացս: 3 Բայց յոյժ պատուիրանաւ զգուշացուցանէր թագաւորն Վեհդենշապիոյ՝ ոչ տալ ումեք զիտել, ո՛չ զառնուլ եւ զգնալ զնոսա ի քաղաքէն, եւ ոչ զճանապարհն ընդ որ տանիցին, եւ ոչ զտեղի մահուանն ուր սպանանիցեն զնոսա: 4 «Քանզի լուեալ է, ասէ, մեր ստուգութեամբ, թէ աւելի, ասէ, վասն այսր կարի խնդան ի մահ՝ որք ի մոլար աղանդն են քրիստոնէից. զի այդպէս ասեն, թէ ոսկերք այնոցիկ, որք յաղագս Աստուծոյն իւրեանց մեռանին, եւ որ ոք, ասէ, յիւրում տանն ունիցի ինչ անտի, թէ եւ փոքր խրխոր ինչ ունի՝ եւ վատ ինչ եւ խորամանկ ի Նա եւ ի Նորա տունս եւ ի սիրելիս ոչ մերձենայ: 5 Այլ եւ զայս եւս, ասէ⁵, ասեն, թէ ի բանս ատենի աջողութիւնս⁶ տան եւ իմաստս եւ քաջութիւնս գտանել եւ պահպանութիւն: 6 Եւ մինչեւ ի մահ ջանան անձամբ եւ կարասուով գոնէ ատամն մի կամ եղունկն մի գտանել յայնպիսեացն, եւ ի տունս իւրեանց տանել: 7 Այլ եւ զայն եւս ի հաւատարիմ մարդկանէ, որք ի մոլար աղանդին լոցա են եղեալ, ապա զմեր լուսաւոր եւ զարդար արեւնս ունին, տեղեկացեալ ենք, թէ կանայք լոցա, ուստերք եւ դստերք, եւ զգարդս ոսկւոյ եւ արծաթոյ եւ մարգարտոյ⁷ տարեալ ուրուք լոցա, թէ կարի փոքր ինչ յոսկերաց այնր մեռելոց տայր լոցա՝ զայն մեծարգոյ եւ պատուական համարին: 8 Եւ զի՞նչ եւս այլ աւելի ասեմ. եւ զհարց եւ զմարց զարդս, զոր

1 ՁԱտ. Նոյնպէս եւ տայր հրաման վասն

2 ՁԱտ. վեհդեն շապիոյ

3 Ձ. Նախ՝ ամբարակապետի, յետոյ՝ քերած է կա-ն

4 ՁԱտ. մովպպետեան

5 ՏՏ. չիք ասէ

6 ՏՏ. յաջողութիւնս

7 Ձ. մարգարտոյ